ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1001-Ա

«29» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՄԱՐԶԻՉ ԴԱՎԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ թիվ 3 արտահերթ նիստի թիվ 24 որոշումը, հաշվի առնելով Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ Ռ. Խաչատրյանի 25.09.2025թ թիվ Ե-539/1 գրությունը՝ ըմբշամարտի վետերանների աշխարհի առաջնության մասնակցության համար «Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիչ Դավիթ Ստեփանյանի մասնակցելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածից /հոդ. 4727/՝ ըմբշամարտի վետերանների աշխարհի առաջնության մասնակցության համար «Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիչ Դավիթ Ստեփանյանի 163002144752 հաշվեհամարին փոխանցել 200000 /երկու հարյուր հազար/ դրամ ֆինանսական աջակցություն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1002-Լ

«29» սեպտեմբերի 2025թ.Ք. Էջմիածին

ՎԻԿՏՈՐԻԱ ՎԱՉԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը, սոցիալական գնահատման արդյունքները և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հայկ Նահապետ փողոցի թիվ 24Ա հասցեի բնակիչ և «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի» «Կուլտուրայի» բաժնի 3-րդ կուրսի ուսանող Վիկտորիա Վաչիկի Վարդանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի» 1570027790960100 հաշվեհամարին փոխանցել 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ՝ Վիկտորիա Վաչիկի Վարդանյանի ուսման վարձի պարտավորություններից նվազեցնելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1003Ա

30 մայիսի 2025թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 300/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 25.06.2025թ. թիվ 735Ա որոշման պահանջներով, առաջարկել է կառույցն իրականացնող անձանց՝ Նորիկ Համայակի Գաբրիելյանին, Մաքրուհի Գևորգի Գաբրիելյանին, Ծովինար Նորիկի Գաբրիելյանին և Հմայակ Նորիկի Գաբրիելյանին, գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 300/1 հասցեում գտնվող՝ 94.4քմ /94.4քմ արտաքին և 82.5քմ ներքին/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0094հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Նորիկ Համայակի Գաբրիելյանը, Մաքրուհի Գևորգի Գաբրիելյանը, Ծովինար Նորիկի Գաբրիելյանը և Հմայակ Նորիկի Գաբրիելյանը տվել են իրենց գրավոր համաձայնությունը գնելու այն՝ ըստ ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 94.4քմ /94.4քմ արտաքին և 82.5քմ ներքին/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները 315 863 /երեք հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ և 0.0094հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով՝ 271 425 /երկու հարյուր յոթանասունմեկ հազար չորս հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նորիկ Համայակի Գաբրիելյանին, Մաքրուհի Գևորգի Գաբրիելյանին, Ծովինար Նորիկի Գաբրիելյանին և Հմայակ Նորիկի Գաբրիելյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 300/1 հասցեում գտնվող՝ 94.4քմ /94.4քմ արտաքին և 82.5քմ ներքին/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0094հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Նորիկ Համայակի Գաբրիելյանի, Մաքրուհի Գևորգի Գաբրիելյանի, Ծովինար Նորիկի Գաբրիելյանի և Համայակ Նորիկի Գաբրիելյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԼՔԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1004Ա

«30» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ, 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի 38 շենք 33 բնակարան հասցեի բնակիչ Լիլիթ Արշակի Աշուղբաբյանի 16.09.2025թ. դիմումը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 24.09.2025թ. թիվ 19 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Լիլիթ Արշակի Աշուղբաբյանին /ծնված՝ 11.01.1983թ., անձնագիր՝ AS 0568293/ գրավադրելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իր անչափահաս երեխա՝ Մարիամ Արամի Հովհաննիսյանին /ծնված՝ 21.03.2009թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 107130/ պատկանող Արմավիր մարզ Վաղարշապատ համայնք Էջմիածին քաղաք Վազգեն Առաջինի փողոց 38 շենք 33 բնակարանը /կադաստրային ծածկագիրը՝ 04-002-0048-0012-038-033/:
2. Հսկողություն սահմանել անչափահաս Մարիամ Արամի Հովհաննիսյանի /ծնված՝ 21.03.2009թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 107130/ ծնող Լիլիթ Արշակի Աշուղբաբյանի /ծնված՝ 11.01.1983թ., անձնագիր՝ AS 0568293/ գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Լիլիթ Արշակի Աշուղբաբյանին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1005 Ա

30 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱԼԻԿ ՍԵՐՈԲԻ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, քննության առնելով թիվ 12/25 վարչական գործը՝ Ալիկ Սերոբի Դալլաքյանի կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Մարգարա խճուղի, թիվ 85 հասցեում՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող շինության վրա, առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ իրականացնելու համար վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, **պարզեց, որ**

Ալիկ Սերոբի Դալլաքյանը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, գ. Ոսկեհատ, Երիտասարդական փող., թիվ 4 տուն և իրավախախտման հասցե՝ Վաղարշապատ, ք. Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի, թիվ 85, ն/ք 012715306, անձնագիր՝ AP0622021, տրված 09.11.2016թ., 051-ի կողմից) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Մարգարա խճուղի, թիվ 85 հասցեում, իրեն սեփականության իրավունքով պատկանող շինության վրա, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան թույլտվության իրականացրել է շինարարական աշխատանքներ՝ կառուցելով 2-րդ հարկ, ինչի կապակցությամբ 2025 թվականի սեպտեմբերի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում լսումներ իրականացնող հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Ալիկ Սերոբի Դալլաքյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

1. Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 15.09.2025 թվականին կազմված թիվ 10 արձանագրությունը, տեղազննությունը և լուսանկարները:
2. Հանձնաժողովի 25.09.2025թ. թիվ 12/25 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:
3. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 26.09.2025 թվականին կազմված տեղազննությունը և տեղազննության վայրի լուսանկարները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Ալիկ Սերոբի Դալլաքյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Մարգարա խճուղի, թիվ 85 հասցեում, իրեն սեփականության իրավունքով պատկանող շինության վրա առանց թույլտվության կառուցել է 2-րդ հարկ:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 15.09.2025 թվականին կատարվել է տեղազննություն և պարզվել է, որ Ալիկ Սերոբի Դալլաքյանի կողմից կառուցվել է 2-րդ հարկ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերի 25-ին հրավիրվել է լսում:

Ներկայանալով նիստին՝ Ալիկ Սերոբի Դալլաքյանը հայտնել է, որ արձանագրության կազմման պահին աշխատակիցների կողմից նախազգուշացվել է իրավախախտման փաստի և վերջինիս հետևանքները վերացնելու մասին, հաջորդ օրը վերացրել է իրավախախտման հետևանքները, խնդրել է հիմք ընդունելով վերոգրյալը ցուցաբերել մեղմ մոտեցում:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 26.09.2025 թվականին կրկին կատարվել է այց իրավախախտման վայր և կազմվել է տեղազննության արձանագրություն:

Համաձայն 26.09.2025 թվականին կազմված իրավախախտման վայրի տեղազննության՝ Ալիկ Սերոբի Դալլաքյանի կողմից վերացվել են իրավախախտման հետևանքները և տարածքը բերվել է նախկին տեսքի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, իրավախախտման վնասակար հետևանքները վերացնելը, այդ թվում պատճառած հետևանքները կամավոր վերացնելը, ինչպես նաև հիմք ընդունելով 26.09.2025թ.-ին տարածքի ուսումնասիրության հիման վրա կազմված տեղազննության ակտը՝ Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող

հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհիսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը:

Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը...:

Տվյալ պարագայում Ալիկ Սերոբի Դալլաքյանը դադարեցրել է շինարարական աշխատանքները, ապամոնտաժել ապօրինի կառուցված 2-րդ հարկը, տարածքը բերել է նախկին տեսքի, ուստի տվյալ իրավախախտման մասով որոշում կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել կատարված իրավախախտման բնույթը, Ալիկ Սերոբի Դալաքյանի կողմից դրսևորած վարքագիծը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը դադարեցնելու և հետևանքները վերացնելու ուղղությամբ կատարված գործողությունները:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, Ալիկ Սերոբի Դալլաքյանի կողմից դրսևորած վարքագիծը՝ իրավախախտումը դադարեցնելու և հետևանքները վերացնելու ուղղությամբ և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ և 154-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ալիկ Սերոբի Դալլաքյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1006-Ա

«30» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 26.09.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 994-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑԱՆԿԻ ՉՈՐՐՈՐԴ ԿԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների ու «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 26.09.2025 թվականի «Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքում ավագանիների համամասնական ընտրակարգով ընտրությունների նախապատրաստման և անցկացման նպատակով ընտրական տեղամասերի կազմավորման և տեղամասային կենտրոններ սահմանելու մասին» թիվ 994-Ա որոշմամբ հաստատված ցանկի 4-րդ կետում կատարել փոփոխություն՝ «Պատասխանատու՝ տնօրեն Հովհաննես Հովհակյան, հեռ.՝ 094 34 06 82» բառերը փոխարինել «Պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Հովհաննես Հովհակյան, հեռ.՝ 094 34 06 82» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1007-Լ

«30» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ «ԱՐՑԱԽԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՐՃԱՐԱՆ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ՝ ԴԵՊԻ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐԵՐ ՇՐՋԱՅՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը, և հաշվի առնելով 09.09.2025թ-ին ստացված «Միասին» համայկական ՀԿ-ի նախագահ Գևորգ Չիչյանի գրությունը, քարտուղարության բաժնի պետ՝ Սամվել Մելքոնյանի զեկուցագիրը՝ «Արցախի տարեցների աջակցության սրճարան» սոցիալական ծրագրի շահառուների համար դեպի Շիրակի մարզի պատմամշակութային վայրեր շրջայց կազմակերպելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից «Արցախի տարեցների աջակցության սրճարան» սոցիալական ծրագրի շահառուների՝ դեպի Շիրակի մարզի պատմամշակութային վայրեր շրջայցի կազմակերպման համար 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ դրամ փոխանցել ԱՁ Արթուր Բաղդասարյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1008 -Ա

«30 » սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՊԱՎԼԻԿ ԱՐՏՈՒՇԻ ՂԱՐՍԼՅԱՆԻՆ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԵԴԱԼ» ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 08.10.2024 թվականի թիվ 73-Լ որոշումը, Վաղարշապատի համայնքապետարանի «Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի բռնցքամարտի մարզիչ-մանկավարժ, ՀՀ վաստակավոր մարզիչ Պավլիկ Արտուշի Ղարսլյանի կողմից Վաղարշապատի համայնքապետարանի «Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ում երկարատև, նվիրված, անբասիր աշխատանքի և մասնագիտական բարձր որակներ ցուցաբերելու համար.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Պավլիկ Արտուշի Ղարսլյանին շնորհել «Համայնքի ղեկավարի մեդալ»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1009-Ա

«01» հոկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

«ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2025 թվականի հոկտեմբերի 01-ի N 6686).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի հոկտեմբերի 01-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Երևան-Արմավիր-Թուրքիայի հանրապետություն Մ5, 16.050 կմ (Մանուշյան փողոց) հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 323 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10104

«01» հոկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

«ԻՄԻՋ Մ. Գ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և «ԻՄԻՋ Մ. Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2025 թվականի հոկտեմբերի 01-ի N 6685).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԻՄԻՋ Մ. Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի հոկտեմբերի 01-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Երևան-Արմավիր-Թուրքիայի հանրապետություն Մ5, 15.850 կմ (Մանուշյան փողոց) հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 325 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1021/Ա

01 հոկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 17.03.2015 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 103 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքապետի 17.03.2015թ. թիվ 103Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1)հիմնական և եզրափակիչ մասերում նշված «273քմ» բառը փոփոխել «258քմ» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1012-Լ

«02» հոկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ վաստակավոր մարզիչ, Վաղարշապատի «Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի բռնցքամարտի մարզիչ Պավլիկ Ղարսլյանի հոգեհանգստի համար ծաղկեպսակ ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 25000 /քսանհինգ հազար/ դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1013-Լ

«02» հոկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 2710 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի խորհրդական Նարեկ Խաչատրյանի զեկուցագիրը, հոկտեմբերի 8-ին Էջմիածնի 2710 ամյակի կապակցությամբ կազմակերպվող համաքաղաքային միջոցառումների շրջանակներում անցկացվող նկարիչների սիմպոզիումի համար նկարչական պարագաներ և միանման շապիկներ ձեռք բերելու նպատակով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 649760 /վեց հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր վաթսուն/ դրամ փոխանցել ԱՁ Արթուր Մկրտչյանին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**